

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՏԻՆԻՄ ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ
ԽՄԲԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ ԴԱՐՁԵՐԵՍՆԵՐԻՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ,
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՏՎԱՑՄԱՆ
ԱՃՈՒՐԴԻ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հայտարարում է հսկիչ-դրամարկղային մեքենաների որոշակի խմբաքանակների կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումներ, ապրանքային և սպասարկման նշաններ տեղադրելու համար աճուրդ (ծածկագիրը՝ ՊԵԿ-ՀԴՄ-002): Լոտն իրացվում է աճուրդի ձևով անցկացվող բաց հրապարակային սակարկությունների միջոցով, դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող ճանաչված անձի (անձանց) ֆիրմային անվանումը (ապրանքային և սպասարկման նշանը) կտպագրվի ՀԴՄ կտրոնների դարձերեսին և 2010 թվականի հունվարի 1-ից կիրացվի ՀՀ ողջ տարածքում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք կարող են ուսումնասիրել լոտը (լոտերը), ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 900-1700 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 1300-1400 ընկած ժամանակահատվածի):

Աճուրդն անցկացվելու է 2009 թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 1100-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքի դահլիճում՝ ք.Երևան Խորենացու 7.: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար անհրաժեշտ է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, աճուրդային հանձնաժողով՝ ք.Երևան Խորենացու 7. (հեռ.՝ 59 46 14) կամ այցելել հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայք (www.taxservice.am):

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք կարող են դիմել աճուրդային հանձնաժողովին մինչև սեպտեմբերի 17-ը 2009թ. ժամը 1800՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- ա. անձը հաստատող փաստաթուղթ (լիազոր ներկայացուցչի դեպքում՝ նաև լիազորագիր)
- բ. իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը կամ ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման վկայագիրը,
- գ. նախավճարի վճարման անդորագիրը:

Աճուրդին մասնակցելու համար նախատեսված նախավճարի չափը կազմում է 100.0 հազար: Նախավճարն անհրաժեշտ է վճարել ՀՀ կենտրոնական գանձապետարանի մրցութային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովման համար նախատեսված՝ 900008000011 հաշվեհամարին: Աճուրդին մասնակցած և չհաղթած անձանց մուծած նախավճարը վերադարձվում է մասնակցի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու օրվանից երեք բանկային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաև աճուրդը չկայանալու դեպքում:

Աճուրդում իրացվելու են հետևյալ լոտերը.

Լոտ N1. 20 մլն հատ ՀԴՄ կտրոնների դարձերեսներին միաժամանակ 3 ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու իրավունք:

Լոտի մեկնարկային գինը յուրաքանչյուր կտրոնի համար 2 դրամ՝ ընդհանուր գումարով մեկ ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու համար 40 մլն դրամ:
Նվազագույն հավելման գումարը՝ 4 մլն դրամ:

Լոտ N2. 20 մլն հատ ՀԴՄ կտրոնների դարձերեսներին միաժամանակ 2 ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու իրավունք:

Լոտի մեկնարկային գինը յուրաքանչյուր կտրոնի համար 3 դրամ՝ ընդհանուր գումարով մեկ ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու համար 60 մլն դրամ:
Նվազագույն հավելման գումարը՝ 6 մլն դրամ:

Լոտ N3. 20 մլն հատ ՀԴՄ կտրոնների դարձերեսներին բառապես մեկ ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու իրավունք

Լոտի մեկնարկային գինը յուրաքանչյուր կտրոնի համար 7 դրամ՝ ընդհանուր գումարով ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու համար 140 մլն դրամ:
Նվազագույն հավելման գումարը՝ 14 մլն դրամ:

Աճուրդում հաղթողին որոշելու կարգը հաստատված է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 28.07.09թ. “Հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ որոշակի խմբաքանակների կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումներ, ապրանքային և սպասարկման նշաններ տեղադրելու իրավունքի հատկացման աճուրդների անցկացման կանոնակարգը հաստատելու մասին” N2075-Ն հրամանով:

Լրացուցիչ տեղեկություններ՝

- ՀԴՄ կտրոնների չափերն են 57մմ X 80մմ, 44մմ X 80մմ
- Ֆիրմային անվանումը (ապրանքային կամ սպասարկման նշանը) տպագրվելու է 2 գույնով,
- ՀԴՄ կտրոնների դարձերեսներին միաժամանակ 3 ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու դեպքում դա կզբաղեցի կտրոնի դարձերեսի մակերեսի (բացառությամբ հատուկ համարի համար նախատեսված մակերեսի) 1/3-ը, միաժամանակ 3 ֆիրմային անվանում (ապրանքային կամ սպասարկման նշան) տեղադրելու դեպքում դա կզբաղեցի դարձերեսի մակերեսի (բացառությամբ հատուկ համարի համար նախատեսված մակերեսի) 1/2-ը,
- Աճուրդի մասնակիցների հետ լրացուցիչ կքննարկվի ՀԴՄ կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումների (ապրանքային կամ սպասարկման նշանների) դիզայնի և ՀԴՄ կտրոնների իրացման հետ կապված հարցերը:

Սույն ծանուցման մեջ նախատեսված պայմանները և տեղեկությունները փոփոխվելու դեպքում կտրամադրվի համապատասխան ծանուցում:

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ